

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ

ՀԱՅ ՀՈԳԵԼՈՐԱԿԱՆԻ ԿԵՐՊԱՐՆ ՕՏԱՐՆԵՐԻ ՆՕԹԵՐՈՒՄ

Սխարհաքաղաքական ներկայ պայմաններում, երբ քարոզչություններ գործիքակազմը թերեւս հասել է կատարելության, առանձնակի կարեւորություն է ստանում մեր ազգային խնդիրներին աղերսուող տեղեկությունների անկողմնակալ վերլուծությունը, վերհանումն ու տարածումը: Ժամանակին Հայ Եկեղեցու եւ հայ հոգեւորականութեան դէմ պայքարող քարոզչամեքենան մեր ողջ հայ միջնադարեան գրականութեան մէջ առանձնացրեց յատկապէս Յոհան Եպիսկոպոսի կերպարը եւ այնպիսի եռանդով տարածեց բանահիւսական այս նիւթը, որ անգամ այսօր շատերը դժուարութեամբ են հաւատում, որ Բուզանդարան պատմությունքը պահպանել է բազմաթիւ Յոհանից կտրականապէս տարբերուող հայ հոգեւորականների կերպարների վերաբերեալ վկայություններ. իսկական հաւատացեալ, աստուածավախ, ազգասէր ու նուիրեալ մարդկանց գործերը, աւաղ, մթազնոււմ են Յոհանի ծիծաղական պատմություններով:

Այստեղ ցանկանում ենք յիշել 1800-ականներին Հայաստան եւ հայաշատ բնակավայրեր այցելած ամերիկացի եւ անգլիացի քարոզիչների հրատարակություններում առկայ՝ հայ հոգեւորականութեանը եւ մեր Եկեղեցուն վերաբերող անդրադարձները, որոնք ժամանակին ներկայացրել ենք «Էջմիածին» ամսագրի էջերում¹: Ուշագրաւ է, որ երբեմն անգամ յոյժ կարճառօտ տողերում ուրուագծոււմ է հայ նուիրեալ հոգեւորականի եւ հայ մարդու անգուգադրելի մի կերպար: Հարկ է առանձնակի նշել, որ մեր դիտարկած հեղինակները քարոզիչ-միսիոներներ են, եւ նրանց այցելությունների բուն նպատակը հոգեորսութիւնն է: Եւ հայութեանն առընչուող բոլոր այն «խնդիրները», որոնք արժանացել են նրանց ուշադրութեանը, կարող են օգտակար լինել օտարամուտ քարոզչության դէմ այսօրուայ պայքարում: Վերջիններիս գրառումները համադրելով՝

¹ Տե՛ս «Էջմիածին» 2018, է., էջ 31–46, ԺԱ., էջ 83–99, ԺԲ., էջ 16–32:

վստահաբար կարող ենք ասել, որ հոգեորսական քարոզչության ընթացքում նրանք բախուել են երկու հիմնական խոչընդոտի, ազգային դպրության, ազգային հզոր դպրոցի առկայությունն էլ, իրենց իսկ բառերով, «անդրդուելի հոգեւորականություն»։ Առաւել խորանալով՝ տեսնում ենք, որ դպրոց-քահանայ-եկեղեցի անքակտելի կապը, կամ աւելի ճիշտ՝ միասնությունը, գրեթէ անյաղթահարելի բարդություն էր առաջացնում օտար քարոզչի համար։ Յիշենք հայկական դպրոցների մասին նրանց որոշ դիտարկումներ. «[Դպրոցի]՝ գրեթէ հինգ տարի առաջ կանգնեցուած շէնքը գտնւում է եկեղեցու բակում, եւ այն հայկական ճաշակի ու վայելչութեան [վառ] նմուշ է։ Ասում են, թէ հաստատությունն զգալի միջոցներով է օժտուած... այն անվճար դպրոց է, եւ հայազգի ամեն ոք՝ ցանկութեան դէպքում, կարող է իր զաւակներին ուղարկել այնտեղ... Հաճելի էր Նոր Կտակարանը նրանց ձեռքերին տեսնելը... Աստուածաշունչն ընդունուել էր իբրեւ դասագիրք...»։ Քարոզիչների նպատակներն ու նկրտումները հաշուի առնելով՝ թերեւս կարող ենք կարծել, որ «Հաճելի էր Նոր Կտակարանն աշակերտների ձեռքերին տեսնելը» ասելիս միսիոներները տհաճ հիասթափություն են ապրել, որովհետեւ իրենց «աշխատանքը» անհամեմատ հեշտ կլինէր, եթէ գործ ունենային խաւար եւ թերուս հանրութեան հետ։ Նրանց ազատ գործելու հնարաւորությունները սահմանափակում են նաեւ այն հանգամանքով, որ դպրոցը «գտնւում է եկեղեցու բակում», այսինքն՝ միշտ եւ հանապազ հոգեւոր հովուի ուշադրութեան ու հոգածութեան ներքոյ է։ Ուստի, ականատես ենք լինում հոգեորսների հերթական հիասթափությունը. «Թոխաթ վաճառաշահ քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցու տարածքում էր հայկական վարժարանը... Ներս մտնելով՝ տեսանք, որ աշակերտներն ընթացիկ դասի նմանութեամբ սովորում էին աղօթք արտասանել՝ հաւանաբար պատրաստուելով եկեղեցական ծառայութեան։ [Ի թիւս այլ գրքերի]՝ նրանց դասագիրքը նաեւ Նոր Կտակարանն էր...»։ Քարոզիչների աչքից չի վրիպում այն, որ հայոց կրթական հաստատությունները ժամանակի համար բարձր մակարդակ էին ապահովում եւ բարեկեցիկ վիճակում էին նաեւ տնտեսական առումով. «Մեծ, սակայն անկում ապրող էրզրումի հայկական վարժարանը բացառիկ մեծ ու ճոխ էր... Սովորողների թիւը հինգից վեց հարիւր էր։ Նրանք խմբերի էին բաժանուած եւ ուսանում էին ընդհանուր բոլոր ճիւղերը՝ նաեւ քերականություն ու տրամաբանություն»։ Նախանձելի էր նաեւ այն իրողությունը, որ «իրենց համայնքի անդամներին կրթելու անհրաժեշտությունը հայերի

համար լաւ գիտակցուած մի գաղափար է, որ [ամենուր] իրականացում է [ըստ կարելոյն բարձր մակարդակով]»: Եւ սա, թերեւս, անցանկալի է քարոզիչների համար, ուստի եւ արձանագրում են. «Այն, որ կրօնը մուտք է գործում եւ միաւորում է նրանց էութեանը, կարելի է եզրակացնել բերեալ յիշատակութիւններից, օրինակ՝ նրանից, որ դպրոցը սովորաբար եկեղեցու անմիջական հարեւանութեամբ էր լինում, կամ, որ աշակերտներն աղօթքներ են սովորում, եւ վերջապէս, որ Նոր Կտակարանի գրքերը մշտական կիրառութիւն ունեն»: Ներկայ հատուածները, փաստօրէն, եկեղեցու եւ դպրոցի, ուսուցչի եւ հոգեւորականի՝ միասնական գործելու մասին կարեւորագոյն դիտարկումներ են, որ չեն կորցրել իրենց նշանակութիւնը նաեւ մեր օրերում: Քարոզիչների վկայութեամբ՝ քրիստոնէութիւնն իբրեւ պետական կրօն հռչակելու հէնց արշալոյսին մեր եկեղեցու հայրերը գիտակցել են դպրոցի դերը հայ հանրութեան կեանքում: Ինչպէս իրենք են նշում՝ «...հազիւ թէ գտնուի մի աւան, մի գիւղ, ուր Գրիգոր Լուսաւորիչը չի քարոզել: Եւ բոլոր այդ վայրերում նա դպրոցներ էր հիմնում»: Հետեւաբար՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ հայ հոգեւորականը մեր դիտարկած հատուածներում հանդէս են գալիս իբրեւ կրթութեան եւ դպրութեան, ազգի լուսաւորութեան կարեւոր գործը հիմնովին գիտակցող ու արժեւորող, նաեւ իրականացնող:

Յատկապէս խորն է եղել քարոզիչների զարմանքը, երբ հեռաւոր բնակավայրերում են առերեսուել Սուրբ Գրքերին քաջածանօթ հայորդիների. «Ընտանեկան միջավայրում՝ մեր հիւրընկալի, նրա կնոջ, երեխաների ու մի քանի հարեւանների հետ թոնրի շուրջը նստած հետաքրքիր երեկոյ անցկացրինք: Նա գիւղի քահանաներից մէկի որդին էր՝ խոհեմ եւ ուշիմ մարդ: Եւ նա առաւել տեղեկացուած էր, քան կարող էինք սպասել նման մի բնակավայրի պարագային: Նրա իսկ նախաձեռնութեամբ մեր զրոյցը լուրջ բնոյթ ստացաւ, եւ խօսակցութեան նիւթը փաստարկելու կամ լուսաբանելու համար նա [պահոցից] բերեց եւ յաճախակի հատուածներ էր բերում ընտանեկան Աստուածաշնչից: Ուշ ժամի հանգամանքից անտեղեակ՝ զրոյցը շարունակեցինք երկար, սակայն սթափուելով՝ ներում հայցեցինք նրա հանգիստը խանգարելու համար: Բայց նա մեզ հաւաստիացրեց, որ ո՛չ ինքը եւ ո՛չ իր ընտանիքը նեղութիւն չեն կրել: [Նա նաեւ նշեց], որ հայրը յաճախ այցելում է իրենց, եւ գիշերն անց են կացնում հոգեւոր ընթերցանութեամբ եւ զրոյցներով: Վստահաբար, այս

հօր եւ որդու [պատմութիւնը] կարող է դիտարկուել որպէս հայ հոգեւորականի վարքի եւ էութեան առաւել արդար օրինակ»:

Օտար հեղինակները խօսում են նաեւ այն մասին, որ անգամ տարագրութեան մէջ հայերը հեշտութեամբ կարողանում են կազմակերպել իրենց համայնքի հոգեւոր-մշակութային կեանքը. «Հայոց պատմութեանն անգամ հարեւանցի ծանօթացող ամեն ոք կցնցուի հայերի ու հրէաների միջեւ առկայ նմանութիւններից: Ընդհանուր առմամբ, նրանք իրենց ազգային միասնութիւնը պահպանել են կրօնական վարդապետութեանը զուգահեռ: Երկուսի մասին էլ կարելի է ասել, որ սփռուած են [աշխարհով մէկ], երկուսին էլ ձգում է առեւտրական գործունէութիւնը, եւ իրար նմանութեամբ ներգրաւուած են թանկարժէք մետաղների [մշակման եւ վաճառքի] բնագաւառում: Ի սէր անձնական [բարեկեցութեան]՝ առեւտրային շահի հետապնդումը բացասական ազդեցութիւն է գործում քրիստոնէական սկզբունքների զարգացման վրայ: Բայց հայ վաճառականները, ամեն դէպքում, բացառութիւն են այս կանոնից: Դիտարկման մեծ կարողութիւններով օժտուած դոկտոր Բիւկենէնս² իր «Christian Researches [in Asia]» աշխատութեան մէջ ասում է. «Հայերի կարելի է հանդիպել Ասիայի գրեթէ բոլոր մեծ քաղաքներում: Նրանք Արեւելքի գլխաւոր առեւտրականներն են, որ Կանտոնից (Գուանչժօու, Չինաստան.— Ա. Մ.) դէպի Կոստանդնուպոլիս մշտական շարժման մէջ են: Նրանց բնորոշ գծերն են՝ ունեւոր, աշխատասէր, գործունեայ ու ձեռներէց: Նրանք հաստատուել են Հնդկաստանի կենսական բոլոր կենտրոններում, ուր ժամանել են անգլիացիներից շատ դարեր առաջ: Եւ ամեն վայրում, որտեղ հաստատուում են նրանք, կառուցում են եկեղեցիներ եւ բժախնդրօրէն ու յաւուր պատշաճի պահում են քրիստոնէական կարգը: Նրանց եկեղեցական հաստատութիւնը Հնդկաստանում առաւել յարգուած է, քան անգլիացիներինը... Նրանք ամենայն անաղարտութեամբ են պահել Աստուածաշունչը, եւ նրանց վարդապետութիւնը, որքանով հեղինակին յայտնի է, հէնց Աստուածաշնչի վարդապետութիւնն է: Մեր կայսրութեան ողջ տարածքով հայերը պահում են եօթներորդ օրն Աստծուն պաշտօն մատուցանելու քրիստոնէական աւանդոյթը: Նրանք երկինք խոյացող նոյնքան զանգակատուն ունեն Հնդկաց երկրում, որքան մենք՝ անգլիացիներս»:

Անգլիական գաղութի առընչութեամբ հնչած այս պնդումը բացորոշ ցոյց

² Կլաուդիոս Բիւկենէն (1766–1815 թթ.) — շոտլանդացի աստուածաբան, քարոզիչ:

է տալիս հայ ժողովրդի վերաբերմունքը հոգեւոր կեանքի ու կառույցի եւ ազգային հոգեւորականութեան հանդէպ:

«Eastern Churches» գրքի հեղինակ էռնեստ Սիլուանուս էփլեարդը պատմում է, թէ ինչպէս էին պարսիկները խուժել Հայաստան Ն. դարի կէսերին. «Նրանց առաջին գործը եղաւ այն, որ հրամայուեց վեց ամսուայ ընթացքում խոնարհել քրիստոնէական պաշտամունքի բոլոր տաճարները, բռնագրաւել գրքերը. քահանաներին արգելուեց ուսուցանել, իսկ մենաստանները ենթակայ էին աւերման: [Սահմանուում էր նաեւ], որ մոգական ծէսը հարկադրաբար եւ բծախնդրօրէն պէտք է կատարուի: Այս հրամանի հրապարակումը խոր արձագանք գտաւ: Ունեւոր խաւի [մի մասն] ու [որոշ] մեծ հողատէրեր շտապեցին իրենց անվերապահ համաձայնութիւնը տալ: Ուսեալների եւ լուսաւորուածների [մի մասի] համար մազդեզականութիւնը նոր ասպարէզ էր բացում. նրանց առարկութիւններն անհետացան: Պետական պաշտօնեաներն անձայն երեսները շրջեցին դէպի արեւելք ու երկրպագեցին ծագող արեգակը: Սակայն, հոգեւորականութեան մեծամասնութիւնն անդրդուելի էր. նրանց հետ էին նաեւ հասարակ ու պարզ մարդիկ»: էփլեարդի շարադրանքի գերակայ միտքը, ըստ ամենայնի, «հոգեւորականութեան մեծամասնութիւնն անդրդուելի էր» արտայայտութիւնն է, որով արդէն ընկալելի է դառնում պատմութեան յետագայ ընթացքը. որեւէ արգելք, որեւէ բռնութիւն ու բռնակալ չեն կարողանալու իր հայրենի հաւատքից հեռացնել հային, այն ազգին, որի «հոգեւորականութեան մեծամասնութիւնն անդրդուելի է» օտարախորթ կրօնի եւ երեւոյթների հարցում:

Հեղինակներն իրենց տեսանկիւնից բացասական գոյներով են ներկայացնում Կարինի հոգեւոր առաջնորդին: Ամբողջովին հոգեորսութեան խնդիրներին ու հեռանկարներին նուիրուած «Christianity in Turkey» գրքում Օտիս Դուայթը դժգոհում է յատկապէս էրզրումի հայ եպիսկոպոսից. «Տիրոջ գործը (իմա՛ միսիոներների քարոզչութիւնը.— Ա. Մ.) հաստատուն չէր հայկական միջավայրում: Չէին դադարում հետապնդումները: Մայրաքաղաքում [բողոքական] եկեղեցու աստիճանաւորների եւ նրանց աջակիցների հանդէպ զսպուածութիւն կար, ինչը նուազում էր գաւառներում եւ մարզերում: Եւ բողոքականները երբեմն ծայրամասերում ենթարկուում էին դաժանագին պատիժների ու կոտանքների, մինչդեռ մայրաքաղաքում բնակուող եղբայրներն ապրում էին հանգիստ եւ խաղաղ [պայմաններում]: Բայց թերեւս էրզրումի [Եփրեմ]

եպիսկոպոսը³ գերազանցում էր միւսներին Աւետարանի հետեւորդների նկատմամբ ցուցաբերած իր ցասկոտ ատելութեամբ, վճռական ու աններում դաժանութեամբ: Քաղաքի ամեն ծայրում նա իր գործակալներն ունէր, որոնք հետեւում էին մարդկանց շփումներին ու տեղաշարժին: Յաճախ իր ենթակայութեան տակ եղած քահանաները տեղաւորւում էին միսիոներների կացարանների հարեւանութեամբ գտնուող տների երդիկներին, որպէսզի տեսնեն, թէ ովքեր են այցելւում նրանց... Բազմաթիւ են դէպքերը, երբ [մարդիկ] բրածեծ են արուել նրա աչքի առաջ՝ զուտ այն բանի համար, որ իրենց զրոյցներում յարգանք են դրսեւորել Աստծու խօսքի (կարդա՛րողոքական քարոզիչների.— Ա. Մ.) հանդէպ: [Օրինակ]՝ մի հրաշալի երիտասարդ մերկ ոտքերին քսան հարուած ընդունելուց յետոյ բանտ նետուեց՝ կրկնակի մեղքի՝ Սաղմոսաց գրքի արդի հայերէն թարգմանութեան օրինակն ուրիշին վաճառելու եւ քարոզիչներից մէկին տուն հրաւիրելու համար: Մէկ ուրիշը՝ գաւառական մի ուսուցիչ, դաժանաբար բրածեծ արուեց գիւղի բնակիչներին Աւետարան ուսուցանելու համար: Այլ դէպք. մի առեւտրական, որ աւելի վաղ ճանաչել էր ճշմարտութիւնը (իմա՛ քարոզիչների որոգայթն էր ընկել.— Ա. Մ.), հէնց եպիսկոպոսի սենեակում գետնին տապալուեց ու անգութ ծեծի ենթարկուեց, որից յետոյ նրան հեռացրին եկեղեցուց, եւ հասարակութեան անդամներին հրահանգեցին փողոցում նրան հանդիպելիս թքել երեսին, ընդամենը մէկ անգամ միսիոներներին այցելելու պատճառով: Նաեւ նրա քահանան, որ ժամանակին համակրանք էր դրսեւորել վաճառականի հանդէպ, կանչուեց եպիսկոպոսի մօտ եւ բրածեծ արուեց: Մէկ ուրիշը ձերբակալուեց ու բանտարկուեց, որովհետեւ մի անգամ միսիոներ Փիբոդիի տուն էր գնացել եւ մի քանի գիրք ձեռք բերել: Այդ գրքերը բռնագրաւուեցին եւ այրուեցին հէնց նրա ներկայութեամբ, իսկ ինքն ազատ արձակուեց այն ժամանակ, երբ գրաւոր խոստացաւ, որ այլեւս երբեք կապ չի ունենայ միսիոներների ու առաւել եւս նրանց տարածած գրքերի հետ: Ուրիշ օրինակ. մի բարեպաշտ պատանի անասելի վայրագութեամբ բրածեծ արուեց, զուտ այն բանի համար, որ եպիսկոպոսի լրտեսները լսել էին, թէ կամենում է Աստուածաշնչով առաջնորդուել⁴:

³ Դուալթն աւելի ուշ է տալիս հայ եպիսկոպոսի անունը՝ Eprem (տե՛ս էջ 258). «առաջնորդ Կարնոյ Նփրեմ», որին Յովհաննէս Ը. Կարբեցի կաթողիկոսը ձեռնադրել էր «1841 յունիս 22-ին» (ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, Գ., §2537):

⁴ Անդ, էջ 188—189:

Ձեռնպահ մնալով հայ եպիսկոպոսի գործունեությունը գնահատելուց՝ պարզապէս նկատենք, որ Թուրքիայի տարածքում գտնուող աւանդական Եկեղեցիներից իւրաքանչիւրի ներկայացուցիչները, իրենց կարողությունների սահմանում, փորձում էին դիմակայել արտաքին՝ օտար ազդեցություններ: Եւ չնայած Դուայթը «մասնագիտացած» էր Հայ Եկեղեցու զաւակների հոգեորսութեան ոլորտում, չի կարողանում անտարբերութեան մատնել Յունաց պատրիարքի պաշտպանական քայլը. «Յոյն պատրիարքը հրաման արձակեց, որ Եկեղեցուց կհեռացուեն բոլոր նրանք, ովքեր վաճառում, գնում կամ նոյնիսկ ընթերցում են լիւթերականների կամ կալուինականների (միսիոներներին այդպէս էին կոչում.— Ա. Մ.) գրքերը»⁵:

Ոչ պակաս կարեւոր է Դուայթի միւս գրառումը, որից տեղեկանում ենք, որ հայ եւ յոյն հոգեւորականությունից բացի, միսիոներների դէմ պայքարել են նաեւ Թուրքիայի կառավարական մարմինները՝ պետական անվտանգութեանն աղերսուող լուրջ վտանգ նկատելով. «Հետագայում նաեւ կայսերական հրովարտակով (Ֆերման) սահմանում էր, որ ամեն պատրիարք պէտք է ուշադիր [հետեւի] իր ժողովրդին, հսկի [ու զերծ պահի] օտար ազդեցությունից եւ կրօնական անհաւատարմությունից: Միով բանիւ՝ [երկրում] սկսեց թագաւորել ահաբեկչությունը, եւ բողոքականությունն արմատախիլ անելու համար դիմում էին ամեն միջոցի»⁶: Սա ուշագրաւ, գուցէ նաեւ ուսանելի վկայություն է, թէ իսլամական Թուրքիան ինչպէս էր պաշտպանում իր քրիստոնեայ քաղաքացիների իրաւունքները՝ պետական ամենաբարձր մակարդակով պայքար մղելով աղանդաւորական քարոզչութեան դէմ:

Ամփոփելով՝ նշենք, որ անգլիացի եւ ամերիկացի քարոզիչների գրուածքների համաձայն՝ հայ հոգեւորականն ազգային Եկեղեցու, ազգային մշակոյթի ու դպրութեան, ասել է թէ՛ ազգային ինքնութեան նուիրեալն ու պաշտպանն էր:

РЕЗЮМЕ

В докладе обсуждаются визиты американских и английских миссионеров в Армению и армянскую диаспору в разных странах в XIX веке, а также их мнения об армянском духовенстве и Армянской Церкви.

Исходя из мнений зарубежных миссионеров-исследователей, переведенных с английского и опубликованных в журнале «Эчмиадзин», можно удостовериться, что армянский священнослужитель был приверженцем и защитником национальной Церкви, национальной культуры и образования и, наконец, национальной идентичности.

SUMMARY

The article discusses the visits of American and English missionaries to Armenia and the Armenian diaspora in different countries in the 19th century, as well as their views on the Armenian clergy and the Armenian Church. Based on the opinions of foreign missionaries and researchers, which were translated from English and published in “Etchmiadzin” magazine, one can make sure that the Armenian clergymen were adherents and defenders of the national Church, national culture, education and, finally, of the national identity.

